

ցիւ մեքենայ մի բերել տալ, վաճառի
այրեցեայ գետուղն տակ գտնուելով՝
չափազանց խոնավ տեղ, չափազանց
այլ չոր ոգ կ'ընէ :

Պր. Սէկրիւնանի այս տարուան
տաացած ծխախոտն նոր բան մ'ըլ-
լալով գաղթականութեան մէջ, կաւա-
վարութիւնն շատ գոհ աչօք կը նայի
իւր վրայ, վաճառի իրմով ծխազլա-
նիկի պատարանութիւնն տեղւոյն ա-
րուեստներէն առաջին կարգի տեղը
բռնեց և շահագործութիւնն ալ՝ առ-

եւտրական մի մեծ ճիւղ դարձաւ .
և այս պատճառաւ է որ կուսակալին
միջնորդութեամբ ծխազլանիկներուն
իտալիա ներածման միջնորդն ըն-
դունեցաւ . կառավարութիւնն խոս-
տացած է այժմ իրեն ուզած դայտա-
վայրը տալ ծխախոտի մշակման համար :
Պր. Սէկրիւնանի խորհրդականն ան-
գամ է առեւտրական սենեկին, և հո-
գարարձու՝ յոյն գաղութին, ի մասին
եկեղեցական մատակարարութեան ի-
բրև անդամ արեւելեան եկեղեցւոյ :



ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԻ ՄԷՋ



Խմբագրատան մի մէջ նստել է քառասունամեայ
մէկը, քիսազոյն, կարճահասակ, կոյր դէմքով և
մորուռ, կիսավակ աչքով, որ կարծես հագիւ ալ-
քին ժայռով կ'ուզէ ակնարկ մը տալ իւր դիմացը
պատահողին : Շրթանցը վրայ — որ հագիւ կ'ընէ
պերեւելչներու տակէն — միշտ կ'ես ժիծաղ մը կայ,
իւր քնադրոսքեան (caractère) յատկանիշը : Իւր
նստելու և գրիչը շարժելու կերպէն կը գոչակեն
քեզ զայն յոյրոյրիկ ուլիկ՝ աննշան մտոր մ'ըլլալու
է՛. այլ անցեալ մ'ունեցիր է, — գոր այժմ փնտռե-
լու հետ է... Ճանապարհաց վրայ՝ քայլելու մի-
շտ — ներկայապէս խմբագիր է, մեր գրագի-
տաց այն դասուն պատկանող, որունց միակ նպա-
տակն է գրել : Ճիշդ նոյն պահուն, երբ գրագիր է
նա իւր քերթին մէջ կարելու յաւելուածներ... յիւ-
րոցներ կցելու առոր դեմ՝ իւր յրագիրը
կանգնելու դիտմամբ, պատանի մի՛ փափաքելով
յրագրութեան ասպարիսին մէջ նետուիլ՝ ներս կը
մտնէ, ինքզինքը ասպարիսիքէն համար որ ընդու-
նոյ իրոյն յօդուածագիր իւր քերթին խմբագրու-
թեան մէջ . զոչաւ երկուքին մէջ հետեւեալ խօսակ-
ցութիւնն կ'ըլլայ :

ԽՄԲԱԳՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻ

ԽՄԲԱԳ. — Ի՞նչ կը հրամայես, Պարոն. կարճ
կապէի՛ր խնդրեմ՝ ժամավաճառ չընէիր
զես, Թերթիս մէջ մի քանի կարևոր յա-
ւելուածներ ընկեր զբաղած եմ. չի
սեռար դուրս գալաւոգաց և ընթեր-
ցողաց բազմութիւնը՝ որոնք անհամբեր
կը սպասեն ինձի :

ՊՏՆ. — Ներեցեք, Պ. Խմբագիր, եկեր եմ

գլուխնիդ ցաւցնելու . բայց մի վախճի՛
անգին ժամանակնիդ չեմ վատնել, եր-
կու բառ է ըսելիքս : Կարելի՛ էր որ
զես ալ ընդունէիք իբրև անդամ կամ
ընկեր Ձեր խմբագրութեան մէջ :

ԽՄԲԱԳ. — Այդ գովելի փափաք մ'է, Պարոն,
սակայն մեծ բանց մը կայ... ունիս ար-
դեօք Թերթիս պահանջած յատկու-
թիւնները և պայմանները :

ՊՏՆ. — Ունիմ Թէ չունիմ՝ չեմ յիշեր հի-
մակ, վերջը կ'ըսեմ Ձեզի այդ բանը .
բայց կընտր ապահով ըլլալ որ պիտի
գոհացնեմ Ձեզ :

ԽՄԲԱԳ. — Խօսքերդ կշռելով ըսէ, Պարոն.
ինքզինքդ Սրեկիքի կամ Մասիսի խմբ-
ագրատանը կը կարծես. գիտցիր որ
ես քելով գոհ չեմ ըլլար :

ՊՏՆ. — Այդ բանը գիտնալուս համար է,
Պ. Խմբագրատան, որ լեցուն ինչպի-
տապարով եկեր եմ Ձեզի ներկայանա-
լու :

ԽՄԲԱԳ. — Ի՛նչ, հիմակ հարցունքերուս ուշ
գիր. ուր ըրեր ես հայերէն լեզուի և
գրականութեան ուսումը :

ՊՏՆ. — (Կարմրելով և գրեթէ դողդալով —
անդուշտ խմբագրին ազդած պատկառաւ-
քն և սևոր հեգնիլ ժպիտէն — կը պա-
տասխանէ). Ա. Ա. վարժարանին մէջ :

ԽՄԲԱԳ. — (Քննիծաղ մը յրթանց վրայ, որ չգի-
տես քի յիշ կը նշանակէ, յետ վայրկեան
մի յանդ, կ'ըսէ). Դատ ուրախ եմ այդ
մասին. զի ես ալ նոյն վարժարանին
մէջ ըրեր եմ իմ նախնական ուսումն,

և ահա կը տեսնեն որ այսօրուան օրը, — յետ այլևայլ բարձր պաշտօններ վարելու՝ երեսփոխան ըլլալու, և այլն, — խորագիր եմ այնպիսի թերթի մը, որ կարծեմ ազգերուս մէջ առաջինն է իւր... անընտրեանք — մեղայ — անշահանգորութեամբ բռնկ կ'ուզէի. էյ, Պարոն, ինչ կ'ընես առոր:

ՊՏԵ. — Ի՞նչ կ'ըսես, Պ. Խմբագիր, հարցնելու բան է այդ:

ԽՄԱԳԻ. — Կեցիք, հարցում մ'ալ ընեմ. գրաւ կանուծիւն ըսինք վերը, այդ ճիշդն մէջ տանեն աւելի որ մասին յարմարութիւն ունիս:

ՊՏԵ. — Գրականութեան մէջ, Պ. Խմբագիր, ամենէն աւելի յարմարութիւն ունիմ — եթէ չեմ սխալիր — փաստերով պատճառաբանելու, բարդական և կրօնական խնդրոց, կամ թէ, իմաստասիրական՝ պատմական՝ հնաստական նու. թոց վրայ գրելու: Բայց եթէ կ'ուզէք բան իմ ճարտարութիւն տեսնել, յանձնեցէք ինձ գրել արժանաւոր անձի մը կամ առարկայի մը վրայ, տեսնէք թէ ինչպէս անոր արդիւնքը կամ արժանիքը գուրս կը գտնէցնեմ:

ԽՄԱԳԻ. — (Այլապէս՝ ոտք կ'իյնէ բարկութենէն, որպէս քե կայծակի ցնցում մը զգացած լլլալ, և գոյուար շարժելով կ'ըսէ). Այդ ամենէն չեզաւ, այդ բանը գործերնիս կ'աւրէ. շատ կը ջախճ՝ որ պիտի չըկարենամ ընդունիլ զքեզ. վասնզի ըսլորովին մեր գրութեան հսկողունայ ես: Ձեռ գիտեր որ այդ տեսակ բաներու վրայ գրել, պատճառաբանել, ուրիշին համար կամ գովել, արդի գրագիտութեան շրջանակէն դուրս ձգուցնել պարիթ եղան. այդպիսի անկարող քաներ գրել մենք շատոնց ուրիշ ազգային թերթերու թողուցեր ենք:

ՊՏԵ. — Ապա ի՞նչ պէտք է ընել Ձեր խմբագրութեան մէջ ընդունելի ըլլալու համար:

ԽՄԱԳԻ. — Կրնան արդեօք թէթեւ և գիւրգամսութեան բաներու վրայ գրել, որ ժողովրդեան հետաքրքրութիւնը է ծիծաղը շարժել. ահա ատոր մէջ է մեր յաջողութեան գաղտնիքն. օրինակ իմի, այս պիտի վերագրով յօդուածներ գրել. «Պոլին Ժայլը», «Վերուցնէ խաչ վէն», «Գլուխին առած ուր կ'երթան», և այլն: Եւ կամ, առանց յաջել յանգնել նայելու, ամէն մարդու, գէմ խօսիլ, ամէն բան մեղադրել՝ վար զարնել. օր. Իրաբարեաններու, Միւլմարեաններու, Թաղականներու, Աղբային հիւանդանոցի հոգաբարձուներու, եւ բնի նաւ. պղծերուս բարիք ընողներուն գէմ խօսիլ և գրել (կարդա՛ «Մրդաբաններ» յօդուածը): Կրնան գարձեալ մէկ խօսքով՝ մէկ հարուածով՝ չէ.

րակէսի նման — առանց ամենին փաստերու, զի մենք ատոնց պէտք չունինք — ասպաղել կրօնական կամ քաղաքական հաստատութիւններ, օրենքներ, և այլն, ինչպէս օրինակ իմի, պաշտպանել աւստրալուստութիւնը, քահանայից կուսակցութեան պէմ գրել (կարդա՛ «Կայրեկանքը» յօդուածը). Ժարդիկ որ զատկարարականութեան միջէն վերցնուի կրօնքը և կրօնագիտութիւնը իբրեւ աւերորդ բան, պաշտել և ծառայել Չուայի գրքերը հաւատար (մեղայ, մեղայ) Ս. Գրքի, և այլն: (Այստեղ մեր ճարտասան խմբագիրն մեծ շունչ մը կ'առնու. և յետոյ կը շարունակէ լրջորեմբ): Ահա տոյն ատեն անպատճառ կ'ընդունուի՝ իբրեւ արժանաւոր անգամ և ընկեր՝ մեր թերթին խմբագրութեան մէջ:

Այս խօսքերուս վրայ շարաւած մնաց պատմական, այդու իւր կրօնական և բաւոյական զգացումները — որոնք դեռ կային սրտին մէջ քե և հոգեվարք միւլմարի մը — արհամարհուած տեսնելով: Իսկ Պ. Խմբագիրն, յիշելով իւր բերրին մէջ ընկելիք յանելուածները՝ զոր մնացորդ էր նստիղուն խօսակցորեան պատճառաւ, աւաղտեց զայն և անկիւնադէս յանձնեց վաճառողաց. և յետոյ սկսաւ անիկ հանդարտօրէն յառաջ տանիլ իւր խօսակցութիւնը:

ԽՄԱԳԻ. — Մոռցայ բան մ'ալ հարցնելու. գրութեանդ մէջ գրաբարեան ես թէ աշխարհաբարեան, և թէ աշխարհաբարեանց օր խմբին կը պատկանիս:

ՊՏԵ. — Կը ներկէ, Պ. Խմբագիր, ես գեառաւորն անդամ կը լսեմ այդ զանազանութիւնները. գրելու միջոց ես չայրեկ լեզու կը գործածեմ, այսինքն է՝ ինչպէս որ կը խօսիմ՝ այնպէս ալ կը գրեմ:

ԽՄԱԳԻ. — Չարմանք. կ'ուզես թերթիս յօդուածագիր ըլլալ և գեառաւոր գիտեր այդ զանազանութիւնները: Գրաբարեան կ'ըսուի՝ ո՛վ որ չին գրեթերուն ան. գործածելի լեզու կը գրէ, որ բնաւ ժողովրդեան մէջ ընդունելի չէ, զոր հաւկրնալու և գրելու համար հարկ պիտի ըլլայ զգեղ յոգնեցնել բառգիրք նայելով. քերականութիւն սորվելով, և այլն. և, եթէ չիջգը կ'ըսեն — entropous, — այդ պատճառին համար է որ կ'տեսնէք գրաբար լեզուն. մենք այդ տեսակ բաներու զուլիս և ժամանակ չունինք: Ընդհակառակն այդարհարարեան կ'ըսուի՝ ո՛վ որ լրագիրներու կամ՝ ռօր լեզու կը գրէ. բայց այս վերջիններուն մէջ պէտքուս խառն կայ. յետադիմական (rétrogressive) և յառաջադիմական (progressiste): Սրինակով մը բացատրեմ խօսքս. ո՛վ որ գրաբարի գարձեալներ կամ բաներ կը գործածէ,

և զգացում, առաքիկոսներն, տունը, հայր, օր, և այլն, և ասոնց նման բառերը կը հնչովէ զգացման, առաքիկոսներան, տան, հօր, օրոշան, և այլն, այնպիսին յետադիմական է և մեզի չի տգործ չունի. իսկ մի որ ուսմիկ բայաարուժութիւններ կը գործածէ և յիշեալ բառերը կը հնչովէ զգացումի, առաքիկոսներն, տունի, հայրի, օրի, և այլն, անոր ըսելիք չունինք. յառաջող իմականներու խմբէն է:

Պատանին, մէկ կողմէն խնայողին համոզիլ խոսքերէն շարժած և միւս կողմէն ապագան հեռքէ փախցնելու փախէն, կը պատասխանէ.

ՊՏՆ. — Ըստ ամենայնի համարմիտ եմ, Պ. Խմբագիր, Ձեր կարծիքին, արդէն իմէ՞ք ուն ան կը սորոշենք. արդ պատրաստ

եմ ընելու՝ ինչպէս որ կ'ուզէք:

Այն ատեն գոնորքեան ժպիտ մը կը փայլի խմբագրին երեսը, կ'ընկէ և կը գրկէ զպատանին. կը կանկէ իւր ընկերները և օգնականները, և կը ներկայացնէ իրենց այս նորամուտ (proselyte) ընկերը: Ապա ամենքը միասին ձևադրեմն անոր գլխուն վրայ դնելով՝ կ'ըսեն միասնաբար. « Արժանի ես, արժանի ես ժողովուրդի քիտանան խմբին մէջ. — Dignus es, dignus es intrare in nostro docto corpore » . Եւ այսպէս կ'աւարտի սրտաւանդի հանդէսն: — Աւագներէ լոյս, ընթերցողք, լրագրական ասպարեզին վրան որ յօգուածագիր մ'ալ աւելցաւ:

Թ. Ժպիտ

ԱՊԱՀԱՐՁԱՆՆ



Թ. Շահնագար կը պարգէ մեր առջեւ (ի Հայրենիք, 3 Օգոս). Ենորհալոյ ընդհանրական Թղթոյն « Առ դատ քահանայից » գրածին մի կտորը.

« Մի և կնաթողադ արտնց կամ այրաթողաց կանանց՝ առանց կանոնական հրամանին գիցէ որ պատկ. զի մի լուծիլիք դուք ի քահանայական կարգէ »:

Եւ աստի կը հետեցնէ. Ա. Թէ Ենորհալին կ'ընդունի ուրեմն՝ Թէ կան իրարմէ գատուած ամուսինք, որք կրնան վերստին պատկուիլ այլոց հետ, պայմանաւ՝ որ կանոնական հրամանն ինի պն: — Բ. Ենորհալին այսու միւս կը յայտարարէ՝ Թէ զատուած ամուսնաց օտարի հետ կրկին ամուսնութեան համար կաւնենք կան:

Եւ մեզ կ'առաջարկէ՝ յիշեալ « պարբերութեան իմաստը իրենց բացատրել, Թէ ըստ քերականութեան և Թէ ըստ տրամաբանութեան »:

Ա. Խօսելով Շահնագարի տառիկն հետեւութեան մասին, մենք չենք ժխտեր, այլ մանաւանդ ըսած էինք մեր նախկին յօդուածի մէջ՝ Թէ կան « Հանգամանքներ, որք ամուսնութիւնը առաջին վայրկեանէն անվաւեր կ'ընեն », և հետեւաբար՝ այդ հանգամանաց մէջ գուգուած ամուսինք կարող են զատուիլ և այլոց հետ ամուսնանալ: Գործը՝ այդ հանգամանքները ուրիշ անընդունելի հանգամանքներէ զատելուն մէջ է, որ անձնական դա-

տաստանաւ և զգացմամբ չլինի, այլ աւետարանի օրինաց ոգւոյն մէջ թափանցելով, և Ա. հարց և եկեղեցւոյ այդ ոգւոյն համաձայն գրած կանոնաց հմտութեամբ:

Այդ հանգամանքները հարցնենք նոյն ինքն Ենորհալոյ, որոյ խօսքը Շահնագար ի մէջ կը բերէ, անուշտ ի պաշտպանութիւն Հայրենիքի ցարդ յայտնած խառնափնդոր և հիմնադրիկ զաղափարաց և սկզբանց: Եւ առ այս՝ կը իրաւորենք զՇահնագար, յառաջ տանել իւր ընթերցումն ընդհանրականի այն իշի մէջ յորում գտած է վերոյիշեալ խօսքը:

« Մի և այնոցիկ՝ որք առեւանգս ասին, զնիցէք պատկ, զի Հակառակ օրինաց Աստուծոյ է: — Մի և աղայոց ունեւոյց՝ յաղագս Հայրենի ժառանգութեան կամ վասն այլ ինչ պատճառի՝ պատկ գիցէ որ ի քահանայից, զի բազում վնասք ինին յայնցանէ ի պատճառս քաժողովման յետոյ ի միմեանց: Այլ ժամանակ պատկ է ի զարգանալ ուրութեան հասակին, ի հնգեատասանին ամաց լրումն տունն, և յերկոտասանին կամ եւս առաւել՝ կնոջն, որպէս զի կարող լինիցին... հաճաք ըսամք՝ զուգիլ: — Մի որ ի քահանայից՝ ի բռնութենէ բռնաւորոց՝ առանց կամաց առնն և կնոյն պատկ գիցէ... զի պատկն այն ամհատատ է և յուժանելի... վասն որոյ առանց խցոյ է յուժանն այնպիսւոյ պատկին... Մի որ համազգեաց, որոց արեան մերձաւորութիւն իցէ, պատկ օրհնութեան գիցէ »: